
Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ



16 Նոյեմբեր 2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**


«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ


Նախորդ շաբաթ ԱՄՆ բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:




Ոսկին դուրս եկավ վերջին 18 ամիսների տատանման միջակայքից:



2020 թվականի հունվարից ի վեր սպառողական գների ինդեքսն (CPI) աճել է 30.2%-ով:



Պղնձի գինը նվազել է, սակայն երկարաժամկետ հեռանկարում մնում է թերագնահատված:



Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 2.59%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 3.63%-ով





Նախորդ շաբաթ Dow Jones-ը աճեց 2.13% -ով

Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 1.41%-ով






Նախորդ շաբաթվա ընթացքում, չնայած ուրբաթ օրվա կտրուկ անկմանը, ԱՄՆ-ի հիմնական բաժնետոմսային ինդեքսները շաբաթն ավարտեցին դրական եկամտաբերությամբ:




Նախորդ շաբաթվա ընթացքում էներգետիկայի ոլորտն առաջատար դիրքերում էր, մինչդեռ տոկոսադրույքների փոփոխությունների նկատմամբ զգայուն ոլորտները հետ մնացին: Միևնույն ժամանակ, տեխնոլոգիական ոլորտը պահպանեց իր ուժեղ դիրքերը:




NVIDIA-ի հետ կապված խնդիրները ճնշում գործադրեցին «Փառահեղ յոթնյակ»-ի բաժնետոմսե-րի վրա, որոնք շաբաթը փակեցին անկմամբ, մինչդեռ SPX 493-ի աճը կազմեց գրեթե 4%:



Արհեստական բանականության հետ կապված բոլոր ոլորտները շաբաթվա արդյունքներով գրանցեցին դրական եկամտաբերություն՝ կարծես շուկան մոռացել էր ընտրությունների արդյունքների մասին:



Երեք տարի շարունակ Nvidia-ի համար գլխավոր ռիսկը համարվում էր Հուանգի անձնական սկանդալը: Շաբաթա վերջին նա խոստովանեց կնոջն անհավատարիմ լինելու մասին՝ կապված Չինաստանի հետ ենթադրյալ կապերի և անկախ հետաքննության հետ: Երեքշաբթի Կոնգրեսում քննարկվում էր նրան կանչելու հարցը, իսկ Nvidia-ի շուկայական արժեքը գագաթնակետից նվազել է գրեթե 2 տրիլիոն դոլարով:



Բաժնետոմսերի շուկա | 3-րդ եռամսյակի հաշվետվություններ

Applied Materials (AMAT)-ը 2026 թվականի չորրորդ եռամսյակում գրանցել է ռեկորդային 10.41 մլրդ դոլարի հասույթ՝ աճը 53%, իսկ զուտ շահույթը կազմել է 2.72 մլրդ դոլար: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է ռեկորդային 4.16 դոլար: Աճին նպաստել է AI ենթակառուցվածքների զարգացման ֆոնին կիսահաղորդչային սարքավորումների պահանջարկի ավելացումը: Ընկերությունը բարձրացրել է ապագա եկամուտների կանխատեսումը:



Brookfield Corporation (BN)-ը 2026 թվականի երրորդ եռամսյակում գրանցել է 1.91 մլրդ դոլարի զուտ շահույթ: Բաշխման ենթակա շահույթը կազմել է 1.718 մլրդ դոլար կամ 0.73 դոլար մեկ բաժնետոմսի հաշվով՝ տարեկան կտրվածքով աճը 16%: Աճին նպաստել են ակտիվների կառավարման և ապահովագրական ուղղությունները: Ընկերությունը ներգրավել է 25 մլրդ դոլարի նոր կապիտալ, իսկ կառավարման ներքո գտնվող ակտիվները հասել են 682 մլրդ դոլարի: Wealth Solutions ուղղության շահույթն աճել է 22%-ով:



Բաժնետոմսերի շուկա | 3-րդ եռամսյակի հաշվետվություններ

Franco-Nevada (FNV)-ն 2026 թվականի երրորդ եռամսյակում գրանցել է 549.3 մլն դոլարի հասույթ՝ աճը 13%, ընկերության զուտ շահույթ աճել է 38%-ով կազմելով 395.5 մլն դոլարի: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 1.89 դոլար՝ աճը 33%, իսկ EBITDA-ն՝ 493.9 մլն դոլար ա-աճը 15%: Աճին նպաստել են ոսկու և նավթի բարձր գները, թեև GEO վաճառքները նվազել են 6%-ով: Ընկերությունն ունեցել է 4.8 մլրդ դոլարի հասանելի կապիտալ և զրոյական պարտք:



Occidental Petroleum (OXY)-ը 2026 թվականի երրորդ եռամսյակում գրանցել է 6.6 մլրդ դոլարի հասույթ, իսկ զուտ շահույթը կազմել է 1.64 մլրդ դոլար: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը (EPS) կազմել է 1.91 դոլար, գործառնական դրամական հոսքերը՝ 4.1 մլրդ, իսկ ազատ դրամական հոսքերը՝ 2.8 մլրդ դոլար: Արդյունահանումը հասել է օրական 1.427 մլն բարել նավթային համարժեքի, իսկ հիմնական պարտքը նվազել է մինչև 10 մլրդ դոլարով: Ֆինանսական արդյունքների վրա ազդել են նավթի և բնական գազի գների փոփոխությունները:




Goldman Sachs-ի տնտեսագետները կանխատեսումներում ներառել են 2027 թվականի մարտին տոկոսադրույքի երրորդ բարձրացումը՝ ԴՊՀ-ի տոկոսադրույքի առավելագույն մակարդակը հասցնելով 4.25–4.50%-ի: Միաժամանակ, առաջին նվազեցման ժամկետը տեղափոխվել է 2027 թվականի դեկտեմբեր: Նմանատիպ վերանայում է կատարել նաև Nomura-ն՝ դեկտեմբերին 50 բազիսային կետով բարձրացման հավանականությունը գնահատելով 10%, իսկ հունվարին՝ 25 բազիսային կետով բարձրացման հավանականությունը 70%:



Պարտատոմսերի շուկա

Շաբաթվա ընթացքում 2-ամյա ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է շուրջ 35 բազիսային կետով՝ գրանցելով 2024 թվականի հոկտեմբերից ի վեր ամենամեծ շաբաթական աճը: 10-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունն ավելացել է մոտ 28, իսկ 30-ամյա պարտատոմսերինը՝ 20 բազիսային կետով: Միաժամանակ, 5-ամյա և 30-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունների տարբերությունը կրճատվել է գրեթե 13 բազիսային կետով՝ վկայելով եկամտաբերության կորի հարթեցման մասին:



Պարտատոմսերի շուկա | USD | JPY

Դրամավարկային քաղաքականության խստացման սպասումների ուժեղացումը դոլարը հասցրեց 2025 թվականի մայիսից ի վեր ամենաբարձր մակարդակին: Հունիսից ի վեր գրանցված ամենամեծ երկօրյա աճի արդյունքում դոլարը դուրս եկավ վերջին 18 ամիսների տատանման միջակայքից:

Չնայած Goldman Sachs-ի՝ յենը որպես AI ռիսկերից պաշտպանվելու լավագույն գործիքներից մեկը գնահատելուն՝ USD/JPY զույգը կտրուկ աճեց՝ հատելով 160-ի մակարդակը: Ճապոնիայի պաշտոնյաները զգուշացրին փոխարժեքի չափազանց արագ տատանումների մասին:





Պարտատոմսերի շուկա | Սփոթ ոսկի

Ոսկին նախորդ շաբաթ դիտարկվում էր որպես նավթի գներին հակառակ շարժվող ակտիվ, այս անգամ հայտնվեց իրական տոկոսադրույքների աճի ճնշման տակ՝ նվզելով 4.7%-ով և հասնելով 3,874 դոլարի: Ոսկին վերջին ամիսների ընթացքում առաջին անգամ փակվեց 4,000 դոլարից ցածր՝ գրանցելով 2025 թվականի հոկտեմբերից ի վեր նվազագույն մակարդակը: Արծաթը նույնպես հայտնվեց ճնշման տակ և կորցրեց 3.6%՝ իջնելով 50 դոլարից ցածր:




Նավթի գները կտրուկ աճել են Թրամփի հայտարարությունից հետո, որ ԱՄՆ-ին գործարք պետք չէ: WTI-ի գինն աճել է չնայած ԱՄՆ-ում ռեկորդային արդյունահանմանը:
Շուկաներում գերակշռում է այն կարծիքը, որ դեէսկալացիա դեռևս չի սպասվում:




Ֆյուչերսներ | NatGas

Նախորդ շաբաթ բնական գազի գներն աճեցին ինչպես Եվրոպայում, այնպես էլ ԱՄՆ-ում: Գների աճին նպաստեցին ավելի ցուրտ եղանակի կանխատեսումները և պահեստային պաշարների կրճատումը:




Դիզելային վառելիքի գները շաբաթվա ընթացքում գրանցեցին զգալի տատանողականություն, հիմնականում հետևելով նավթի գների դինամիկային:




Բիթքոինը հետևեց տեխնոլոգիական բաժնետոմսերի դինամիկային, շաբաթվա ընթացքում կորցրեց շուրջ 6%՝ իջնելով 70,000 դոլարից ցածր և հայտնվելով 200-օրյա սահող միջինից ներքև: Ether-ի անկումը կազմեց մոտ 10%:



ԱՄՆ բաժնետոմսերի նկատմամբ ներդրողների հետաքրքրությունը շարունակում է մնալ աննախադեպ բարձր: 2020 թվականից ի վեր ԱՄՆ բաժնետոմսային ֆոնդերը ներգրավել են 2.1 տրիլիոն դոլար, որից 1.5 տրիլիոնը՝ 2024 թվականի սկզբից: Սա զգալիորեն գերազանցում է Ասիայի զարգացող շուկաների 470 մլրդ դոլարի ներհոսքը, մինչդեռ եվրոպական ֆոնդերից արձանագրվել է 426 մլրդ դոլարի արտահոսք: Միայն վերջին շաբաթվա ընթացքում համաշխարհային բաժնետոմսային ֆոնդերը ներգրավել են 89 մլրդ դոլար՝ վերջին չորս շաբաթվա ընդհանուր ներհոսքը հասցնելով ռեկորդային 266 մլրդ դոլարի: Ներդրողների նախապատվությունը շարունակում է հստակորեն թեքված մնալ դեպի ԱՄՆ շուկան:




ԱՄՆ-ում գնաճը շարունակում է զգալիորեն շեղվել ԴՊՀ-ի 2% թիրախից: 2020 թվականի հունվարից ի վեր սպառողական գների ինդեքսն (CPI) աճել է 30.2%-ով, մինչդեռ 2% տարեկան գնաճի պայմաններում կուտակային աճը կկազմեր ընդամենը 14.3%: Այսպիսով, փաստացի գնաճը թիրախային մակարդակը գերազանցել է 15.9 տոկոսային կետով: Ավելին, CPI-ն արդեն 67 ամիս շարունակ բարձր է 2% թիրախից: Այս իրավիճակում հիմնական շահողները ակտիվների սեփականատերերն են, մինչդեռ գնաճի բեռը շարունակում են կրել սպառողները:




Պղինձ. կարճաժամկետ թուլություն, երկարաժամկետ ներուժ

2025 թվականից ի վեր 58% աճից հետո պղնձի գների աճի տեմպը վերջին շաբաթներին դանդաղել է: Չնայած կարճաժամկետ գների նվազման հավանականությանը՝ դրամական զանգվածով ճշգրտված պղնձի գինը դեռևս գտնվում է պատմական բաշխման 25-րդ տոկոսային սահմանում, այսինքն՝ ժամանակի 75%-ի ընթացքում այն ավելի թանկ է վաճառվել: Սա հուշում է, որ պղինձը դեռևս համեմատաբար էժան է՝ հաշվի առնելով առաջիկա տասնամյակների պահանջարկի աճի հեռանկարները:




Հոկտեմբերին ԱՄՆ-ի բյուջեի դեֆիցիտը կազմել է 404 մլրդ դոլար՝ սահմանելով հոկտեմբեր ամսվա պատմական ռեկորդ: Դեֆիցիտն աճել է 120 մլրդ դոլարով՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, և 337 մլրդ դոլարով՝ 2024 թվականի հոկտեմբերի համեմատ: Պետական ծախսերն աճել են 84 մլրդ դոլարով՝ հասնելով ռեկորդային 773 մլրդ դոլարի: Հատկապես կտրուկ աճել են պաշտպանական ծախսերը՝ 29 մլրդ դոլարով՝ հասնելով պատմական առավելագույնի՝ 129 մլրդ դոլար: Միաժամանակ պետական եկամուտները նվազել են 35 մլրդ դոլարով՝ կազմելով 369 մլրդ դոլար: ԱՄՆ-ի բյուջետային դեֆիցիտի խորացումը շարունակում է մտահոգել:



Արծաթի նկատմամբ ներդրող-ների դիրքավորումը կտրուկ փոխվում է

CFTC-ի տվյալներով՝ նոյեմբերի 3-ին ավարտված հինգ շաբաթ-վա ընթացքում սպեկուլյատիվ ներդրողները վաճառել են 2.3 մլրդ դոլարի արծաթի ֆյուչերսներ: Վաճառքի հիմնական պատճառը 2.6 մլրդ դոլարի նոր կարճ դիրքերի ձևավորումն էր, որը մասամբ փոխհատուցվել է 300 մլն դոլարի նոր երկար դիրքերով: Արդյունքում զուտ երկար սպեկուլյատիվ դիրքավորումը նվազել է մինչև 8 մլրդ դոլար՝ 2025 թվականի հունվարից ի վեր ամենացածր մակարդակը: 2026 թվականի հունվարի գագաթնակետից անկումը գերազանցել է 16 մլրդ դոլարը:




Պատմական անկումների շարքից հետո Nvidia-ն մոտեցել է աջակցության կարևոր մակարդակի, որի պահպանումը կամ ճեղքումը կարող է որոշիչ լինել ոչ միայն ընկերության, այլև ամբողջ տեխնոլոգիական ոլորտի հետագա շարժի համար:



Չինաստանը խրախուսում է քաղաքացիներին ավելի շատ ոսկի գնել՝ զարգացնելով ոսկու վրա հիմնված ֆինանսական նոր համակարգ: Ոսկու գնումները հասանելի են դարձել առցանց բանկային հարթակներում, իսկ բանկերն առաջարկում են տոկոսադրույքներ ոսկու ավանդների համար: Երկիրը հետևողականորեն կուտակում է ռազմավարական պաշարներ՝ պատրաստվելով հնարավոր համաշխարհային ճգնաժամերին: Արհեստական բանականության հնարավոր փուչիկի և համաշխարհային պետական պարտքի աճող ռիսկերի պայմաններում ոսկու նկատմամբ պահանջարկը կարող է էլ ավելի մեծանալ:

Chart 5: The PBoC continued with robust gold buying in face of a declining gold price

The PBoC's reported gold purchases and the gold price*



*Data to 30 September 2026.

Source: State Administration of Foreign Exchanges, World Gold Council

Կորպորատիվ հաշվետվությունների ցանկ

Այս շաբաթ 200, ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի երրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են NVIDIA Corporation (NVDA), Walmart Inc. (WMT), The Home Depot, Inc. (HD), Alibaba Group Holding Limited (BABA), Palo Alto Networks, Inc. (PANW), The TJX Companies, Inc. (TJX), Lowe's Companies, Inc. (LOW) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	↓ Market Cap	P/E	Price
1	NVDA	NVIDIA Corp	Technology	Semiconductors	USA	3924.69B	20.59	162.85
2	WMT	Walmart Inc	Consumer Defensive	Discount Stores	USA	1016.23B	46.41	128.09
3	HD	Home Depot Inc	Consumer Cyclical	Home Improvement Retail	USA	347.88B	24.40	348.69
4	PANW	Palo Alto Networks Inc	Technology	Software - Infrastructure	USA	263.84B	628.76	322.24
5	BABA	Alibaba Group Holding Ltd ADR	Consumer Cyclical	Internet Retail	China	234.79B	22.23	94.38
6	DIS	Walt Disney Co	Communication Services	Entertainment	USA	205.42B	24.54	118.97
7	TJX	TJX Companies Inc	Consumer Cyclical	Apparel Retail	USA	147.80B	24.85	134.37
8	LOW	Lowe's Cos. Inc	Consumer Cyclical	Home Improvement Retail	USA	127.77B	19.26	227.73
9	PDD	PDD Holdings Inc ADR	Consumer Cyclical	Internet Retail	China	112.41B	8.76	78.97
10	INTU	Intuit Inc	Technology	Software - Application	USA	91.31B	20.71	341.70
11	NTES	NetEase Inc ADR	Communication Services	Electronic Gaming & Multimedia	China	77.82B	16.95	122.18
12	ROST	Ross Stores Inc	Consumer Cyclical	Apparel Retail	USA	74.01B	27.99	231.68
13	TGT	Target Corp	Consumer Defensive	Discount Stores	USA	73.35B	16.75	161.45
14	KEYS	Keysight Technologies Inc	Technology	Scientific & Technical Instruments	USA	50.68B	41.00	297.68
15	VIK	Viking Holdings Ltd	Consumer Cyclical	Travel Services	Bermuda	40.14B	29.80	89.87
16	P	Everpure Inc	Technology	Computer Hardware	USA	35.99B	147.35	107.99
17	JD	JD.com Inc ADR	Consumer Cyclical	Internet Retail	China	33.57B	18.82	27.91
18	ESLT	Elbit Systems Ltd	Industrials	Aerospace & Defense	Israel	33.13B	53.26	706.62
19	WSM	Williams-Sonoma Inc	Consumer Cyclical	Specialty Retail	USA	29.92B	25.99	254.05
20	BSP	Bending Spoons S.p.A	Technology	Software - Application	Italy	26.98B	-	41.08

AraratBank

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

Monday, Nov. 16						
8:30 AM	Empire State Manufaoturing Survey	Nov.	-	16.7	25.5
12:00 PM	Fed speeoh: Fed Chairman Kevin Warsh speaks	-	-	-	-
Tuesday, Nov. 17						
8:30 AM	Retail Sales	Oot.	-	0.2%	0.8%
8:30 AM	Import Prioes	Oot.	-	0.7%	1.1%
9:10 AM	Fed speeoh: Fed governor Christopher Waller	-	-	-	-
9:15 AM	Industrial Produotion, M/M%	Oot.	-	0.1%	0.7%
9:15 AM	Capaoity Utilization %	Oot.	-	76.9%	76.9%
9:30 AM	FRB Cleveland President Beth Hammaok speaks at Brookings Institution	-	-	-	-
10:00 AM	Manufaoturing & Trade: Inventories	Sep	-	0.5%	0.4%
10:00 AM	NAHB Housing Market Index	Nov.	-	29	29
2:25 PM	Fed speeoh: New York Fed President John Williams	-	-	-	-
TBA	Cleveland Fed Conversations on Central Banking	-	-	-	-
Wednesday, Nov. 18						
8:30 AM	Housing Starts	Oot.	-	1.3M	1.2M
10:00 AM	Pending Home Sales Idx, M/M%	Oot.	-	-1.4%	-7.3%
1:35 PM	Fed speeoh: Fed governor Miohael Barr	-	-	-	-
2:00 PM	Federal Open Market Committee meeting minutes published	-	-	-	-
2:30 PM	Fed speeoh: New York Fed President John Williams	-	-	-	-
4:15 PM	Fed speeoh: Minneapolis Fed President Neel Kashkari	-	-	-	-

Thursday, Nov. 19						
8:30 AM	Philadelphia Fed Business Outlook Survey	Nov.	-	18	20.9
8:30 AM	Weekly Jobless Claims	Nov. 14	-	200K	200K
10:00 AM	Leading Indioators	Oot.	-	0.1%	0%
11:00 AM	Kansas City Fed Survey	Nov.	-	-	16
12:30 PM	FRB Chioago President Austan Goolsbee partioipates in Eoonomio Club of Indiana moderated disoussion	-	-	-	-
2:15 PM	Fed speeoh: Fed governor Miohael Barr	-	-	-	-
5:30 PM	Money Marketeers dinner event with Federal Reserve Bank of Philadelphia President Anna Paulson	-	-	-	-
Friday, Nov. 20						
8:25 AM	Fed speeoh: Fed governor Christopher Waller speeoh	-	-	-	-
10:00 AM	U. Miohigan Final Consumer Survey	Nov.	-	52.2	48
12:15 PM	Fed speeoh: Fed governor Lisa Cook	-	-	-	-
TBA	Federal Reserve Governor Christopher Waller speaks at National College Fed Challenge finals	-	-	-	-



060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am